Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2022 թվականի հունվարի 27-ի թիվ 14-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ----------էջ 3
2. Ամփոփագիր ----------էջ 6
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ ---------- էջ 7
4. Ֆինանսական ցուցանիշներ ---------- էջ 8
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ----------էջ 41
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ----------էջ 42
7. Եզրակացություն----------էջ 43
8. Առաջարկություն ----------էջ 43

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 257-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	1.«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք: 2.ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում: 3. ՀՀ կառավարության 27.05.2021 թվականի ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում ու լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» N 881-Ն որոշում: 4. ՀՀ կառավարության 21.11.2019 թվականի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1621-Ն որոշում: 5. ՀՀ կառավարության 09.07.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու, Հայաստանի

Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 1154-Ն որոշում:
6. ՀՀ կառավարության 04.11.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1773-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն

Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի

իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումը	Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների պլանը կազմել է 21,403,149.20 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 23,105,697.78 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 17,074,416.21 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 16,663,768.45 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 16,772,875.56 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում, ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 72.12%-ով:

Աշխատակազմում 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով ծախս է նախատեսվել 55 միջոցառման համար, որից 11 միջոցառում (ճշտված պլանով նախատեսված ծախսը 1,746,349.50 հազ. դրամ) չի իրականացվել:

Աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությունն իրականացվել է ինը միջոցառման շրջանակներում՝ ընդամենը 9,876,864.11 հազ. դրամ դրամարկղային ծախսով (ելնելով նշանակալի հաշիվների հաշվեքննության նվազագույն ծածկույթի հանրագումարից):

Հաշվեքննությամբ արձանագրվել է.

1. Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ փաստը կազմել է 72.12%, իսկ նախատեսված 55 միջոցառումից 11-ը չի իրականացվել:
2. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման մասով չի պահպանվել Աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ 28.07.2021 թվականին կնքված «Դրամաշնորհի հատկացման վերաբերյալ 04.05.2020 թվականի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» համաձայնագրի 1-ին կետով սահմանված՝ կազմակերպությանը տրամադրվող ամենամսյա կանխավճարի չափը:
3. 2021 թվականի ինն ամիսների ընթացքում Աշխատակազմի հաստիքների քանակը ՀՀ վարչապետի 11.02.2021 թվականի թիվ 121-Ա և 26.05.2021 թվականի թիվ 569-Ա որոշումներով սահմանվել է համապատասխանաբար՝ 696 և 692, սակայն հաշվետու ժամանակահատվածում 156-ից 170 հաստիք չի համալրվել:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Հաշվեքննության արդյունքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել է անհամապատասխանություն, որը համատարած չէ:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
27.01.2022թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փող., ք. Երևան, Հայաստան

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աշխատակազմի 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 23,105,697.78 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 17,074,416.21 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 16,663,768.45 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 16,772,875.56 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում, ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 72.12%-ով:

Աշխատակազմում 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով ծախս է նախատեսվել 55 միջոցառման համար, որից 11 միջոցառում (ճշտված պլանով նախատեսված ծախսը 1,746,349.50 հազ. դրամ) չի իրականացվել:

Աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննությամբ, ելնելով նշանակալի հաշիվների նվազագույն ծածկույթից, ընդգրկվել է ստորև ներկայացված աղյուսակում բերված ինը միջոցառում՝ 9,876,864.11 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումներ

հազ. դրամ

N	Միջոցառում, հոդված				Փաստ
1	1018-32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	2,582,952.84
2	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,614,023.61
3	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	383,551.60
4	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4113	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	149,389.20

5	1136-11011	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	4521	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	1,662,223.32
6	1136-31004	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	1,340,207.65
7	1213-11001	Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	551,735.32
8	1213-11007	Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	572,259.87
9	1223-11001	Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ	4861	Այլ ծախսեր	1,020,520.70
Ընդամենը					9,876,864.11

ԾՐԱԳԻՐ՝ 1018 «Պետական հատվածի արդիականացման ծրագիր»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»

Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

Ծրագիրը բաղկացած է չորս մասից՝

1. Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր:
2. Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ:
3. Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ:
4. Ծրագրի կառավարում:

Ծրագիրն ընգրկում է երկու միջոցառում՝ 11001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» և 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»:

1018-32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 2,925,581.30 հազ. դրամ, ֆինանսավորվել է 302,000.0 հազ. դրամ (ՀՀ պետական համաֆինանսավորման միջոցներից), փաստը և փաստացի ծախսը կազմել է 2,582,952.84 հազ. դրամ:

2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 2,562,726.48 հազ. դրամ, այդ թվում՝ վարկային միջոցներից 2,297,140.68 հազ. դրամ և ՀՀ պետական համաֆինանսավորման միջոցներից 265,585.80 հազ. դրամ: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի ինն ամիսների բյուջետային ծախսերի մասին հաշվետվությամբ 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով դրամարկղային ծախսը կազմել է 2,582,952.84 հազ. դրամ: Որպես 20,226.36 հազ. դրամի տարբերության հիմնավորում, ՀՀ աշխատակազմի կողմից ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Միջոցառման ծախսն ուղղվել է էլեկտրոնային համակարգերի և համակարգչային սարքավորումների մատակարարմանը: Մատակարարումներն իրականացվել են թվով 12 պայմանագրերի շրջանակներում, որոնցից թվով հինգը ստորագրվել են 2021 թվականին:

31.12.2020 թվականի դրությամբ 1018 ծրագրի արտարժութային հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,500,000.0 ԱՄՆ դոլար:

Պայմանագրերով սահմանված ժամկետներից ուշ մատակարարված ապրանքների վճարումներից հաշվարկվել և գանձվել են տուգանքներ՝ ստորև ներկայացված պայմանագրերով.

Աղյուսակ 2

Հաշվարկված և գանձված տուգանքներ

հազ. դրամ

No	Մատակարար	Պայմանագրի համար	Տուգանքի գումարը
1	«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ	PSMP3-GO-2.2.1.2՝ 16.03.2021	12,075.07
2	«Harmony» ITED Fund և Helix Consulting LLC ՀՁ	PSMP3-GO-2.2.10՝ 25.11.2020	3.73
3	«ՖՈՏՈՆ» ՍՊԸ	PSMP3-GO-2-2-22/1՝ 11.01.2021	371.81
4	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	PSMP3-GO-2-2-22/2՝ 25.12.2020	9.36
5	IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC ՀՁ	PSMP3-GO-2-2-4՝ 14.12.2020	2,424.85
	Ընդամենը վճարումներ		14,884.82

Աղյուսակ 3

1018-32001 միջոցառման (հոդված՝ 5129) 2021 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

Հ/Հ	Ընթացակարգի ծածկագիր	Գնման առարկայի նկարագրությունը	Գնման ձևը	Մասնակիցները	Հաղթող կազմակերպությունը	Պայմանագրի արժեքը ԱԱՀ-ն ներառյալ			Պայմանագրի կնքման օրը		Փաստացի վճարումները կատարված 2021թ. 9 ամսվա ընթացքում		Մեկնաբանություններ
						Սկիզբ	Փոփոխություններ	Փոփոխություններ	Սկիզբ	Ավարտ	Վարկային միջոցներ	Համաֆինանսավորում	
1	PSMP3-GO-2-2-9/A-3	ՀՀ ոստիկանության համար Երևանում, Գյումրիում ու Վանաձորում օպերատիվ կառավարման պիլոտային համակարգերի ներդրման և պահանջվող սարքավորումների ձեռքբերում	Միջազգային մրցակցային մրցույթ	SOS Systems LLC, X-Art LLC, Smart Production LLC and GEOMAPIS LLC ՀՁ	SOS Systems LLC, X-Art LLC, Smart Production LLC and GEOMAPIS LLC ՀՁ	376,911.60 հազ. դրամ	673,458.0 հազ. դրամ	1,166,226.0 հազ. դրամ	16/08/2019	25/03/2022	350,242.00	70,048.40	2021թ. 9 ամսվա ընթացքում իրականացվել է 3 (b), 4-րդ և 5-րդ և 6(ա) փուլերը:
2	PSMP3-GO-2-2-6/1	Էլեկտրոնային նորմատիվ իրավական ակտերի համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. IQUSION IT ՍՊԸ 2. VXSoft Limited (Իռլանդիա) (առաջատար) և Unicomp CJSC ՀՁ	Համատեղ ձեռնարկություն VXSoft Limited և Unicomp CJSC	284,615 Եվրո և 69,366.0 հազ. դրամ	568,615 Եվրո և 69,366.0 հազ. դրամ		15/01/2019	1/05/2021	66,802.05	1,156.10	2021թ. 9 ամսվա ընթացքում իրականացվել է Պայմանագրի 5-րդ փուլի (բ/2) մասը և կատարվել է համակարգի գործառնական ընդունումը:
3	PSMP3-GO-2-2-17	Փաստաթղթերի վավերականացման և անձնական էլ. գրասենյակի համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Softengi Ukraine LLC (Ուկրաինա); 2. ՀՁ VXSOFT Limited (Իռլանդիա) և VXSOFT LLC (Հայաստան)	ՀՁ VXSOFT Limited (Իռլանդիա) և VXSOFT LLC (Հայաստան)	430,000 Եվրո	854,050 Եվրո		24/11/2020	14/06/2022	169,430.70	-	2021թ. 9 ամսվա ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին և 2-րդ փուլերը:

4	PSMP3-GO-2-2-10	Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական E-Notification համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Softengi Ukraine LLC (Ուկրաինա) 2. ՀՁ "Harmony" ITED Fund (Հայաստան) և Helix ConsultingLLC (Հայաստան)	ՀՁ "Harmony" ITED Fund (Հայաստան) և Helix Consulting LLC(Հայաստան)	267,268.00 հազ. դրամ			25/11/2020	2/02/2022	24,237.20	4,847.44	2021թ. 9 ամսվա ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին փուլը:
5	PSMP3-GO-2-2-22/2	Իրավապահ և այլ պետական մարմինների համար SS սարքավորումների ձեռքբերում (Լոտ 2)	Ազգային մրցակցային մրցույթ	Էֆ-Լայն Թրեյդինգ ՍՊԸ	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	25,673.70 հազ. դրամ			25/12/2020	25/03/2021	21,386.95	4,277.39	Պայմանագրի իրականացումը ավարտվել է:
6	PSMP3-GO-2-2-22/3	Իրավապահ և այլ պետական մարմինների համար աուդիո-վիդեո սարքավորումների ձեռքբերում	Գնումներ	«Գրիման» ՍՊԸ; «Էլկոմպ» ՍՊԸ	«Գրիման» ՍՊԸ	1,055.70 հազ. դրամ			29/12/2020	28/01/2021	879.75	175.95	Պայմանագրի իրականացումը ավարտվել է:
7	PSMP3-GO-2-2-4	Հայաստանի քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. JV of IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC 2. Synergy International Systems, Inc.	1. JV of IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC	850,186.80հազ. դրամ և 170,037.36 հազ. դրամ ԱԱՀ			14/12/2020	14/03/2022	440,159.48	88,031.90	2021թ. 9 ամսվա ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին փուլը և մատակարարվել են սարքավորումները:
8	PSMP3-GO-2-2-22/1	Իրավապահ և այլ պետական մարմինների համար գրասենյակային կահույքի ձեռքբերում	Ազգային մրցակցային մրցույթ	«Արգավանդ Կահույք» ՍՊԸ «Գործ-555» ՓԲԸ Նեկա ՍՊԸ Ֆոտոն ՍՊԸ	«Ֆոտոն» ՍՊԸ	50,318.23 հազ. դրամ			11/01/2021	17/08/2021	34,316.0	6,863.19	Մատակարարվել է կահույքի մի մասը:

9	PSMP3-GO-2.2.15	Ինտեգրված անվտանգության համակարգ (Cybersecurity) էլ. կառավարման բոլոր հարթակների համար	Միջազգային մրցակցային մրցույթ	Green Systems LLC (առաջատար) և Unicomp CJSC ՀՁ	Green Systems LLC (առաջատար) և Unicomp CJSC ՀՁ	110,574.00 հազ. դրամ և 1,563,321 ԱՄՆ դոլար			17/03/2021	15/09/2021	764,755.14	14,419.44	2021թ. 9 ամսվա ընթացքում մատակարարվել են Պայմանագրով նախատեսված սարքավորումների մի մասը:
10	PSMP3-GO-2.2.1.2	ՀՀ Վարչապետի աշխատակազմի սերվերային կենտրոնի արդիականացում	Միջազգային մրցակցային մրցույթ	Unicomp CJSC	Unicomp CJSC	433,464.0 հազ. դրամ			16/03/2021	24/06/2021	351,157.44	70,231.49	Պայմանագրի իրականացումը ավարտվել է:
11	PSMP3-GO-2-2-13	Սմարթֆոնների համար թվային ստորագրությունների և նույնականացման համակարգերի (Smart ID) ներդրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Bestsoft CJSC, Methics Oy, Nikita Mobile LLC and SOS Systems LLC ՀՁ 2. IUnetworks LLC	Bestsoft CJSC, Methics Oy, Nikita Mobile LLC and SOS Systems LLC ՀՁ	111,820.0 հազ. դրամ և 22,364.0 հազ. դրամ ԱԱՀ և 120,000 Եվրո			18/06/2021	18/02/2022	63,201.47	3,420.00	2021թ. 9 ամսվա ընթացքում իրականացվել է Պայմանագրի 1-ին փուլը:
12	PSMP3-GO-2-2-24	Պարեկային ծառայության համար SS սարքավորումների ձեռքբերում	Գնումներ	«Բի Լայն» ՍՊԸ Էդիտա «Լանար Սերվիս» ՍՊԸ «Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	12,687.0 հազ. դրամ			14/08/2021	13/09/2021	10,572.50	2,114.50	Պայմանագրի իրականացումը ավարտվել է:
	Ընդամենը վճարումներ										2,297,140.68	265,585.8	

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»
Միջոցառում՝ 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում»
Աշխատանքի վարձատրություն
Հոդված՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»
Հոդված՝4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ»
Հոդված՝ 4113 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում»

2021 թվականի պետական բյուջեով 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 1,740,723.70 հազ. դրամ, ֆինանսավորումը 1,740,325.20 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 1,614,023.61 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,763,223.42 հազ. դրամ:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4111 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 4

1136-11001 միջոցառման (հոդված՝ 4111) 2021 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված վճարումների (դրամարկղային ծախս) վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման նպատակ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատավարձ	-	92,297.10	101,072.53	200,215.90	100,343.90	95,132.90	200.12	90,018.10	81,530.40	760,810.93
Եկամտային հարկ	-	34,528.80	36,142.43	37,135.40	35,236.50	36,076.40	41,130.49	47,257.16	46,969.30	314,476.47
Սոցիալական վճար	-	5,744.18	5,773.05	5,718.40	5,834.80	5,742.70	6,695.07	8,283.82	6,567.25	50,359.27
Դրոշմանիշային վճար	-	2,205.00	2,373.50	2,255.00	2,152.00	2,212.50	2,498.50	2,693.00	2,637.00	19,026.50
Արձակուրդային վճար	8,396.97	12,162.00	16,103.27	19,422.60	18,069.00	33,561.60	55,056.42	34,409.60	12,280.94	209,462.39
Պարգևավճար	398.65	12,787.28	10,179.86	7,030.40	9,884.60	16,000.80	21,644.70	9,589.76	52,143.65	139,659.69
Վերջնահաշվարկ	5,434.57	6,532.57	1,100.74	4,649.10	2,485.10	10,229.90	14,100.56	32,093.73	8,548.54	85,174.82
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	564.52	3,898.41	1,898.37	5,107.70	4,603.20	4,202.70	4,312.46	3,704.42	3,527.93	31,819.70
Օգնություն	-	391.56	-	103.20	277.00	778.80	-	692.50	-	2,243.06
Թաղման նպաստ	114.42	446.45	493.40	973.60			-	-	-	2,027.87
Անդամավճար	-	155.94	187.02	170.30	197.80	194.10	205.37	300.65	164.95	1,576.13
ԸՆԴԱՄԵՆԸ	14,909.13	171,149.29	175,324.16	282,781.60	179,083.90	204,132.40	145,843.68	229,042.72	214,369.95	1,616,636.83

Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 1,616,636.83 հազ. դրամից 2,613.22 հազ. դրամը հաշվետու ժամանակահատվածում ծախսի վերաձևակերպում է:

Համաձայն ՀՀ վարչապետի 26.05.2021 թվականի թիվ 569-Ա որոշման՝ Աշխատակազմի հաստիքների քանակը սահմանվել է 692: Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված ՀԾ-ից արտահանված 3-րդ եռամսյակի ընդլայնված հաշվետվության՝ աշխատակիցների քանակը հուլիս-սեպտեմբեր ամիսներին կազմել է համապատասխանաբար 534, 531, 522 հաստիք:

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Ուսումնասիրվել է ընտրված 18 աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

2021 թվականի պետական բյուջեով 4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 399,700.90 հազ դրամ, ֆինանսավորումը 399,700.25 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 383,551.60 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 396,434.76 հազ. դրամ:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4112 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 5

1136-11001 միջոցառման (հոդված՝ 4112) 2021 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված վճարումների (դրամարկղային ծախս) վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման նպատակ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Ընդամենը
Եկամտային հարկ		153.74	10,804.09	11,763.75	12,781.78	10,503.04	19,778.33	106.66	10,882.51	76,773.90
Սոցիալական վճար			1,675.20	1,740.71	1,898.48	1,792.92	2,835.61	16.97	1,635.49	11,595.37
Դրոշմանիշային վճար			879.00	988.50	1,120.50	1,006.00	1,418.50	5.50	787.00	6,205.00
Պարգևավճար	545.06	35,720.97	38,930.18	42,246.94	39,482.37	35,601.86	25,491.96	36,113.63	34,579.34	288,712.32
Անդամավճար			30.23	48.46	51.30	47.91	39.78		47.33	265.01
ԸՆԴԱՄԵՆԸ	545.06	35,874.71	52,318.71	56,788.36	55,334.43	48,951.73	49,564.18	36,242.75	47,931.67	383,551.60

2021 թվականի պետական բյուջեով 4113 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածով 9 ամիսների ճշտված

պլանը, ֆինանսավորումը, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը կազմել է 149,383.20 հազ. դրամ:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4113 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 6

1136-11001 միջոցառման (հոդված՝ 4113) 2021 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված վճարումների (դրամարկղային ծախս) վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման նպատակը	Հունվար	Փետրվար	Հուլիս	ԸՆԴԱՄԵՆԸ
Եկամտային հարկ		16,426.65	16,438.97	32,865.62
Սոցիալական վճար		2,145.55	2,611.86	4,757.41
Դրոշմանիշային վճար		1,152.50	836.50	1,989.00
Պարգևավճար	54,808.41		54,798.23	109,606.65
Անդամավճար		133.83	116.03	249.87
ԸՆԴԱՄԵՆԸ	54,808.41	19,858.53	74,801.60	149,468.54

Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 149,468.54 հազ. դրամից 79.34 հազ. դրամը հաշվետու ժամանակահատվածում ծախսի վերածևակերպում է:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր»
Հոդված՝ 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին»

«Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» վարկային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքվել է 2014թ. օգոստոսի 6-ին: Այն վերածևակերպվել է 2020թ. հունվարի 10-ին: Վարկի ընդհանուր գումարը կազմում է 50.000.000 ԱՄՆ դոլարին (հիսուն միլիոն ԱՄՆ դոլար) համարժեք դրամ:

Հատուկ հաշվի մնացորդը 31.12.2020 թվականի դրությամբ կազմել է 1,184,741.65 ԱՄՆ դոլար, վարկի դուրս չգրված գումարը (մնացորդը) կազմել է 34,626,085.43 ԱՄՆ դոլար:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով Աշխատակազմի 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 2,690,137.90 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 530,000.0 հազ. դրամ, փաստը և փաստացի

ծախսը՝ 1,662,223.32 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 61.79%-ով:

Վերոնշյալ հոդվածով 2021 թվականի ինն ամիսների ընթացքում երեք կազմակերպություններին կատարվել են վճարումներ, որը ներկայացվում է ներքոնշված աղյուսակում:

Աղյուսակ 7

1136-11011 միջոցառման (հոդված՝ 4521) 2021 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

No	Կազմակերպություն	Պայմանագրի համար	ՀԲ վարկային միջոցներից (075400000908)	ՀԲ վարկային միջոցներից (900000908302)	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ (գործառնական ծախսեր և ենթադրամաշնորհներ), այդ թվում՝		375,353.35	371,968.57	164,918.17	536,886.73
1.1	ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ (գործառնական ծախսեր)	*TPQI-EIF-OP*	249,390.11	247,302.71	123,328.83	370,631.54
1.2	(EIF) Նորարարության զարգացման / Մարզային զարգացման համաֆինանավորվող ենթադրամաշնորհներ		125,963.24	124,665.86	41,589.34	166,255.19
2	ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (գործառնական ծախսեր և ենթադրամաշնորհներ), այդ թվում՝		269,334.55	266,924.52	30,567.29	297,491.80
2.2	(ISC) Արտահանման զարգացմանն ուղղված դրամաշնորհների ենթաբաղադրիչի գործառնական ծախսեր	TPQI-ISC-OP	7,196.00	7,132.16	4,677.59	11,809.74
2.1	(ISC) Արտահանման զարգացմանն ուղղված ենթադրամաշնորհներ		262,138.56	259,792.36	25,889.70	285,682.06
3	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ ՓԲԸ	TPQI-ANIF-OP	512,752.95	509,470.00	309,297.01	818,767.01
Ընդամենը վճարումներ			1,157,440.86	1,148,363.08	504,782.46	1,653,145.54

Թիվ 8390-ԱՄ վարկային պայմանագրով նախատեսվող աշխատանքները իրականացնելու նպատակով Աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ» (ՁԻՀ),

«Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ների միջև կնքվել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրեր:

1. «**Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ**»

Աշխատակազմը մի կողմից և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ը մյուս կողմից, կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման աջակցության նպատակով՝ կողմերը 2020թ. մայիսի 4-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված պետական – մասնավոր գործընկերությունների (ՊՄԳ) և համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի փոխհատուցումն է:

Պայմանագրով սահմանված չափով և կարգով կազմակերպությանը տրամադրվում է դրամաշնորհ գործառնական ծախսերի կատարման համար: Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ծրագրի կառավարման գրասենյակին (ԾԿԳ) է ներկայացնում տարեկան նախահաշիվը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի 2021 թվականի համար Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվով նախատեսվել է ծախսեր հետևյալ բաղադրիչներով՝

Բաղադրիչ 1– «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 2 – Ինժեներական քաղաք բաղադրիչի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 3 –Նորարարության զարգացման համաֆինանսավորող դրամաշնորհներ/ Մարզային զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհների ենթաբաղադրիչի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 4 –Ազգային գերհամակարգչային կենտրոնի հիմնման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր

Բաղադրիչ 5 – Կիբեռ անվտանգության ինկուբատորի և հետազոտությունների և մշակումների (R&D) լաբորատորիայի հիմնման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր

2021 թվականի ինն ամիսների ընթացքում «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ին վճարված գումարները ըստ բաղադրիչների ներկայացված են ներքոնշված աղյուսակում՝

Աղյուսակ 8

2021 թվականի ինն ամիսների ընթացքում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին կատարված վճարումներ (ըստ բաղադրիչների)

Բաղադրիչներ	Վճարում, հազ. դրամ

	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
Բաղադրիչ 1	37,258.44	13,962.09	51,220.54
Բաղադրիչ 2	93,345.20	52,271.64	145,616.84
Բաղադրիչ 3	49,864.77	18,352.25	68,217.02
Բաղադրիչ 4	7,165.14	2,471.92	9,637.06
Բաղադրիչ 5	59,669.15	36,270.92	95,940.08
ԸՆԴԱՄԵՆԸ	247,302.71	123,328.83	370,631.54

«Նորարարության զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհներ և մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհներ» ծրագրի շրջանակներում «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» և Աշխատակազմը 2021 թվականի ընթացքում կնքել են դրամաշնորհի պայմանագրեր հետևյալ կազմակերպությունների հետ և կատարել են վճարումներ, որը ներկայացված է ներքոնշված աղուսյակում՝

Աղյուսակ 9

2021 թվականի ինն ամիսների ընթացքում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին կատարված վճարումներ

No	Կազմակերպություն	Պայմանագրի համար	Վճարում, հազ. դրամ			
			ՀԲ վարկային միջոցներից (075400000908)	ՀԲ վարկային միջոցներից (900000908302)	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	ԷԼՍԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ ՍՊԸ	01/2020/IMG՝ 15.02.2021	9,039.09	8,949.35	5,767.13	14,716.48
2	ՆԱԻՐԻ ՍԹԵՄ ՍՊԸ	02/2020/IMG՝ 15.02.2021	7,236.20	7,164.34	916.46	8,080.80
3	ՍԹԵՄ ԴԻԴԱԿՏԻԿՍ ՍՊԸ	03/2020/RMG՝ 15.02.2021	9,831.42	9,687.46	1,388.67	11,076.14
4	ՕՕՐԵՍ ՍՊԸ	04/2020/IMG՝ 15.02.2021	9,860.29	9,762.30	2,732.75	12,495.05
5	ՌԵՎԱԼՔՈՆ ՍՊԸ	05/2020/RMG՝ 15.02.2021	8,781.14	8,693.91	1,564.28	10,258.19
6	ՎԵԼՎԻՈ ՍՊԸ	06/2020/IMG՝ 15.02.2021	2,820.04	2,792.03	1,032.09	3,824.12
7	ՈՒԱՅՐՍՏՈՔ ՍՊԸ	07/2020/IMG՝ 15.02.2022	10,472.71	10,368.79	4,443.49	14,812.27
8	ԷՅԱՅՓԻ ԹԵՔ ՍՊԸ	08/2021/IMG՝ 10.06.2021	2,560.22	2,534.84	909.16	3,444.00
9	ԲԵՍԹ ՌՈՒԹ ՍՊԸ	09/2021/IMG՝ 30.06.2021	5,065.53	5,015.21	2,147.51	7,162.72
10	ՖՈԼԴԻՆԿ ՍՊԸ	10/2021/IMG՝ 10.06.2021	1,262.52	1,250.00	250.00	1,500.00
11	ԳԵԲԲԻ ՍՊԸ	11/2021/IMG՝ 10.06.2021	3,148.06	3,116.85	1,203.15	4,320.00

12	ԳԵԲԵՍԵՐՏ ՍՊԸ	12/2021/IMG՝ 10.06.2021	10,220.36	10,118.88	2,281.12	12,400.00
13	ՍՄԱՐԹ ԼՈՔԵՐ ՍՊԸ	14/2021/IMG՝ 10.06.2021	6,112.04	6,051.45	1,435.47	7,486.92
14	ՄԵՏՐԻԿ ՍՊԸ	15/2021/IMG՝ 10.06.2021	5,269.52	5,217.29	2,191.52	7,408.80
15	ՖՈՐՋՖԻՔՇՆ ՍՊԸ	16/2021/IMG՝ 30.07.2021	6,445.00	6,380.91	2,619.09	9,000.00
16	ԴԵՆՈՎՈ ՍԱՅԵՆՍԻՍ ՍՊԸ	17/2021/IMG՝ 30.07.2021	4,358.31	4,314.96	2,885.04	7,200.00
17	ՅԵՍՈՖԹ ՍՊԸ	18/2021/IMG՝ 30.07.2021	6,354.48	6,291.29	1,196.71	7,488.00
18	ԻՄՓԱԿՏ ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ	19/2021/IMG՝ 30.07.2021	5,985.99	5,926.46	3,073.00	8,999.46
19	ԻՔՍԲԻՈՆԻԿՍ ՍՊԸ	21/2021/IMG՝ 30.07.2021	2,429.03	2,404.88	480.98	2,885.85
20	ՔԱՅԼՏԵՔ ՍՊԸ	22/2021/RMG՝ 30.07.2021	6,957.02	6,887.84	2,108.56	8,996.40
21	ԹՐԻՍՄԱՐԹ ՍՊԸ	23/2021/RMG՝ 30.07.2021	1,754.27	1,736.83	963.17	2,700.00
ԸՆԴԱՄԵՆԸ			125,963.24	124,665.86	41,589.34	166,255.19

Կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն 2021 թվականի հունիս ամսին կատարել է 38,989.45 հազ. դրամի գործառնական ծախսեր և 16,237.15 հազ. դրամի հարկեր գործառնական ծախսերից: Վճարումները իրականացվել է 12.07.2021 թվականին:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունը հաստատելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում:

Համաձայն 28.07.2021 թվականին կնքված «Դրամաշնորհի հատկացման վերաբերյալ 04.05.2020 թվականի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» համաձայնագրի 1-ին կետի՝ Պայմանագրի 3.3. կետից հետո ավելացվել է 3.3.1 կետը, որով կազմակերպությանը տրամադրվող ամենամսյա կանխավճարի չափը կազմում է 114,328.0 հազ. դրամ, սակայն որի կատարումը չի ապահովվել՝ կանխավճարի սահմանված չափը չի պահպանվել:

2. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ

Աշխատակազմը մի կողմից և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲ ընկերությունը մյուս կողմից կնքեցին 15.05.2020 թվականի դրամաշնորհի հատկացման վերաբերյալ TPQI – ANIF – OP պայմանագիրը:

Նշված պայմանագիրը կնքվել է 15.05.2020 թվականին, հայտը ներկայացվել է 19.05.2020 թվականին, որով որպես կանխավճար պահանջվել է վարկային միջոցներից 71,044.16 հազ. դրամ և համաֆինանսավորման միջոցներից 22,120.96 հազ. դրամ, ընդամենը՝ 93,165.12 հազ.դրամ: 21.05.2020 թվականի և 22.05.2020 թվականի վճարման հանձնարարականներով նշված գումարները փոխանցվել են:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կանխավճարը կազմել է վարկային մասով 71,044.17 հազ. դրամ, համաֆինանսավորման մասով՝ 22,121.46 հազ. դրամ: Ընդամենը կազմել է 93,165.63 հազ. դրամ:

2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կանխավճարը կազմել է վարկային մասով 71,044.17 հազ. դրամ, համաֆինանսավորման մասով՝ 20,459.61 հազ. դրամ: Ընդամենը՝ 91,503.78 հազ. դրամ:

2021 թվականի հուլիսի 6-ին ԾԿԳ է ներկայացվել հունիս ամսվա ծախսերի հաշվետվությունը, ըստ որի հաշվետու ժամանակաշրջանում վարկային միջոցներից ծախսվել է 28,200.27 հազ. դրամ և համաֆինանսավորման միջոցներից՝ 17,849.62 հազ. դրամ: Վճարման համար հուլիսի 6-ին ներկայացվել է հայտ 06/2021, որով պահանջվել է ոչ թե հաշվետվությամբ ներկայացված գումարը, այլ վարկային միջոցներից 14,387.61 հազ. դրամ: Հուլիսի 12-ին համապատասխան վճարման հանձնարարականով վճարումը իրականացվել է:

Օգոստոս, սեպտեմբեր ամիսներին «Պետական հետաքրքրությունների ֆոնդ»-ը հաշվետվություններ չի ներկայացրել:

3. «**Ներդրումների աջակցման կենտրոն**»

Աշխատակազմը և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2020 թվականի մայիսի 15-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայամանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի ֆինանսավորումն է:

Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» միջոցառման 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամին կատարվել է հետևյալ վճարումները՝

2021 թվականի հուլիսի 12-ին կատարվել է վճարում հունիսի 1-ից մինչև 31-ը ընկած ժամանակահատվածի ծախսի փոխհատուցման համար՝

ՀԲ վարկային միջոցներից	– 816.46 հազ. դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	– 539.28 հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ – 1,355.74 հազ. դրամ

2021թ. օգոստոսի 26-ին իրականացվել է վճարում հուլիսի 1-ից մինչև 31-ը ընկած ժամանակահատվածի ծախսերի փոխհատուցման համար՝

ՀԲ վարկային միջոցներից – 600.26 հազ. դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից – 452.19 հազ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ – 1,052.45 հազ. դրամ

2021թ. սեպտեմբերի 10-ին իրականացվել է վճարում օգոստոսի 1-ից մինչև 31-ը ընկած ժամանակահատվածի ծախսի փոխհատուցման համար՝

ՀԲ վարկային միջոցներից – 695.80 հազ. դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից – 427.34 հազ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ –1,123.15 հազ. դրամ

Համաձայն դրամաշնորհի հատկացման պայմանագրի 3.5 կետի՝ պայմանագիրը ստորագրելուց հետո կազմակերպության կողմից դրամաշնորհի առաջին տրանշը ստանալու վերաբերյալ հայտի ներկայացմանը հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է առաջին վճարումը: Կազմակերպության առաջին վճարումը կամ կանխավճարը կազմել է՝

ՀԲ վարկային միջոցներից – 1,700.00 հազ.դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից – 700.00 հազ.դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ – 2,400.00 հազ.դրամ

2021թ. 9 ամիսների ընթացքում «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ»-ին արտահանման զարգացմանն ուղղված դրամաշնորհների ենթաբաղադրիչի գործառնական ծախսերի համար հատկացվել է 11,809.74 հազ. դրամ, որը ներկայացված է ներքոնշյալ աղյուսակում՝

Աղյուսակ 10

1136-11001 միջոցառման 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

No	Կազմակերպություն	Պայմանագրի համար	ՀԲ վարկային միջոցներից (075400000908)	ՀԲ վարկային միջոցներից (900000908302)	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	ԱՐՋՆԻ ՄՍԱՄԹԵՐՔ ՓԲԸ	EDG-001՝ 01.03.2021թ.	74,287.33	73,549.76	14,709.95	88,259.71
2	ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՔԼՈՌՐՍ ՍՊԸ	EDG-002՝ 01.03.2021թ.	23,230.62	23,000.00	4,600.00	27,600.00
3	ՍԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ ՓԲԸ	EDG-003՝ 01.03.2021թ.	25,034.93	24,785.93	4,333.00	29,118.93
4	ՀԵԼԼՈՏԵՔՍ ՍՊԸ	EDG-004՝ 01.03.2021թ.	24,510.89	24,267.10	566.78	24,833.88

5	ՖՈՒԴ ՌԵՓԱԲԼԻՔ ՍՊԸ	EDG-005՝ 01.03.2021թ.	46,259.88	45,800.00		45,800.00
6	ՆԱՀԱՊԵՏ ԲՐԵՆԴԻ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	EDG-006՝ 01.03.2021թ.	8,150.65	8,069.74		8,069.74
7	ՍԱԹԵՆԿԱՐ ՍՊԸ	EDG-007՝ 01.03.2021թ.	8,484.22	8,399.83	1,679.97	10,079.80
8	ՊԱՍԱՆ ՏՈՐԳ ՍՊԸ	EDG-008՝ 02.03.2021թ.	26,180.04	25,920.00		25,920.00
9	ՎՈԼՆԱԹ ՖԱՐՄՍ ՍՊԸ	EDG-009՝ 12.05.2021թ.	26,000.00	26,000.00		26,000.00
Ընդամենը			262,138.56	259,792.36	25,889.70	285,682.06

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը՝ հունվար, փետրվար և մարտ ամիսներին, պայմանագրով նախատեսված փաստաթղթերը ԾԿԳ չի ներկայացրել և այդ ամիսների համար պայմանագրով նախատեսված կարգով վճարումներ չի իրականացվել:

Ֆոնդը առաջին եռամսյակի համար ԾԿԳ է ներկայացրել մեկ ընդհանուր հաշվետվություն և ԾԿԳ-ի կողմից իրականացվել է վճարում ամբողջ եռամսյակի համար, որը կազմել է ՀԲ վարկային միջոցներից 2,606.41 հազ. դրամ և ՀՀ համաֆինանսավորման միջոցներից 1,193.56 հազ. դրամ, ընդամենը՝ 3,793.97 հազ. դրամ:

Երկրորդ և երրորդ եռամսյակներում նման անհամապատասխանություն չի արձանագրվել:

Սույն թվականի հուլիսի 30-ի համաձայնագրով՝ դրամաշնորհի հատկացման վերաբերյալ 15.05.2020 թվականի պայմանագրում կատարվել են փոփոխություններ, որի 3.3.1 կետի համաձայն կազմակերպությանը տրամադրվող ամենամսյա կանխավճարի չափը պետք է կազմի 2,400.0 հազ. դրամ, որից 1,700.0 հազ. դրամը վարկային միջոցների հաշվին:

2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կանխավճարը կազմել է 1,551.93 հազ. դրամ և սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ 1,276.85 հազ. դրամ:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում»
Հոդված՝ 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ»

1136-31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռք բերում» միջոցառման ինն ամիսների ճշտված պլանով 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 2,248,829.90 հազ.

դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 216,526.42 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում), փաստը և փաստացի ծախսը 1,340,207.65 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 59.6 %-ով:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է 1,333,523.30 հազ. դրամ (այդ թվում՝ վարկային միջոցներից 1,120,085.88 հազ. դրամ և ՀՀ պետական համաֆինանսավորման միջոցներից 213,437.42 հազ. դրամ, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի ինն ամիսների բյուջետային ծախսերի կատարման մասին հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 1,340,207.65 հազ. դրամ: Աշխատակազմի կողմից, որպես 6,684.35 հազ. դրամ տարբերության հիմնավորում, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Միջոցառման շրջանակներում կնքվել է 4 պայմանագիր, որի հետ կապված վճարումները ներկայացված է ներքոնշյալ աղյուսակում՝

Աղյուսակ 11

1136-31004 միջոցառման (հոդված 5129) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

N	Կազմակերպություն	Պայմանագրի համար	Վճարում, հազ. դրամ			
			ՀԲ վարկային միջոցներից (07540000908)	ՀԲ վարկային միջոցներից (900000908302)	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ	TPQI-G-2.3.1.2/1	755,376.26	751,997.00	150,399.40	902,396.40
2	«Agrotec» SpA (Իտալիա)	TPQIP- G -3.1.2.1/LOT2	38,680.75	38,680.75		38,680.75
3	«Արփա-Սևան» ԲԲԸ	TPQI-G-3.1.2.1/1	196,829.23	194,873.17	63,038.02	257,911.19
4	ATOS IT SOLUTIONS AND SERVICES GMBH (Ավստրիա)	TPQI-G-2.3.4.1/1	135,883.98	134,534.96		134,534.96
ԸՆԴԱՄԵՆԸ			1,126,770.22	1,120,085.88	213,437.42	1,333,523.30

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերությունը ծախսը կազմել է 908,622.25 հազ. դրամ կամ 59.60%: Համաձայն Աշխատակազմի 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման

վերաբերյալ հաշվետվության՝ տարբերությունը պայմանավորված է COVID-19-ի հետևանքով ՍՉԱՄ-ի համար համակարգչային սարքավորումների մատակարարման ուշացումով: Կիբերանվտանգության ինկուբատորի համար կահույք և գրասենյակային այլ պարագաների մատակարարման համար մրցույթը չեղարկվել է տեխնիկական մասնագրերի վերանայման անհրաժեշտությունից ելնելով:

Միջոցառման շրջանակներում կնքված 4 պայմանագրերից 3-ը կնքվել են 2020 թվականին, 1-ը՝ 2021 թվականին, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 12

1136-31004 միջոցառման (հոդված 5129) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

Հ/Հ	Ընթացակարգի ծածկագիր	Գնման առարկայի նկարագրությունը	Գնման ձևը	Մասնակիցները	Հաղթող կազմակերպությունը	Պայմանագրի արժեքը ԱԱՀ-ն ներառյալ	Պայմանագրի կնքման օրը		Փաստացի վճարումները կատարված 2021թ.-ի ինն ամիսների ընթացքում / հազ. ՀՀ դրամ		Մեկնաբանություններ
						Սկիզբ	Սկիզբ	Ավարտ	Վարկային միջոցներ	Համաֆինանսավորում	
1	TPQI-G-2.3.1.2/1	Ինժեներական քաղաքի լաբորատորիաների համար Մեքենաների և PCB (բազմաշերտ տպասալ) արտադրանքի ձեռքբերում	ՄՄՄ	«ՀՁ Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ (Հայաստան) և Abplanalp Sp. Z.o (Լեհաստան)	ՀՁ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ և Abplanalp Sp. Z.o	902,396.4 հազ. դրամ	12.05.20	31.03.21	751,997.00	150,399.40	Պայմանագրի իրականացումն ավարտվել է:
2	TPQIP-G-3.1.2.1/LOT2	Ջերմային չափումների լաբորատորիայի համար սարքավորումների գնում	ՄՄՄ	1. Globe Corporation (Նիդերլանդներ) 2. Agrotec SpA (Իտալիա) 3. Lokmis UAB (Լիտվա)	Agrotec SpA (AGT)	307,287.67 Եվրո	14.02.20	28.12.20	38,680.75	-	Պայմանագրի իրականացումն ավարտվել է:
3	TPQI-G-3.1.2.1/1	Զանգվածի ու հարակից չափումների լաբորատորիայի համար սարքավորումների գնում	ՄՄՄ	1. AGT S.p.A. (Իտալիա) 2. «Արփա-Սևան» ԲԲԸ-ի (Հայաստան) և Credo USA Inc.-ի (ԱՄՆ) ՀՁ 3. Q&T S.p.A. (Իտալիա) 4. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ(Հայաստան) 5. «Մեդիսար» ՍՊԸ (Հայաստան)	ՀՁ «Արփա Սևան» ԲԲԸ և Credo USA Inc.	212,588.9 հազ. դրամ	12.11.20	28.04.21	194,873.17	63,038.02	Պայմանագրի իրականացումն ավարտվել է:
4	TPQI-G-2.3.4.1/1	Նոր կոմպոնենտների մատակարարում գերհամակարգչային համակարգի արդիականացման համար, տեղադրում, թեսթավորում և ուսուցում	ՈՒՊ	ATOS IT SOLUTIONS AND SERVICES GMBH (Ավստրիա)	ATOS IT SOLUTIONS AND SERVICES GMBH (Ավստրիա)	829,512.40 Եվրո	26.07.21	28.02.22	134,534.96	-	Պայմանագրի իրականացման ընթացքում է:
	Ընդամ. վճարում.								1,120,085.88	213,437.42	

«Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ»-ի, Աշխատակազմի (գնորդ) և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի (մատակարար) հետ կնքված պայմանագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում 29.02.2021թ., 15.03.2021թ. և 31.03.2021թ. դուրս է գրվել 6 հարկային հաշիվ՝ 902,396.40 հազ. դրամ ընդհանուր գումարով և իրականացվել է համապատասխան վճարումներ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Աշխատակազմի (գնորդ) և Agrotec S.p.A. (Իտալիա) (մատակարար) հետ կնքված պայմանագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանի 38,680.75 հազ. դրամ փոխանցումն իրականացվել է 26.01.2021 թվականին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Աշխատակազմի (գնորդ) և «Արփա-Սևան» ԲԲԸ-ի, Credo USA Inc (մատակարար) համատեղ ձեռնարկության միջև կնքված պայմանագրի շրջանակներում, համաձայն վճարման հանձնարարականների, իրականացվել է 212,588.91 հազ. դրամի փոխանցում, որը ներկայացված է ներքոնշված աղյուսակում՝

Աղյուսակ 13

1136-31004 միջոցառման 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

Ամսաթիվ	ՀԲ	ՀՀ համաֆինանսավորում	Վճարման նպատակը
25.12.20	17,715.74		կանխավճարի փոխանցում
24.03.21	3,543.15		կանխավճարի փոխանցում
26.03.21	148,112.24		պայմանագրի մնացած 70 %-ի վճարում
26.03.21	700.00		պայմանագրի մնացած 70 %-ի վճարում
08.04.21		32,137.29	ԱԱՀ
08.04.21		12,995.56	ԱԱՀ
08.04.21		810.33	ԱԱՀ
08.04.21		14,344.77	ներմուծման մաքսատուրք
08.04.21		2,740.18	ներմուծման մաքսատուրք
08.04.21		4.80	պետական տուրք
08.04.21		5.10	պետական տուրք
30.04.21	42,517.78		պայմանագրի մնացած 20 %-ի վճարում
Ընդամենը	**212,588.91**	**63,038.02**	

Համաձայն պայմանագրի GCC 24.1 կետի՝ ապահովագրությունը պետք է կազմի «պահեստից պահեստ» ապրանքների 110 տոկոսը «բոլոր ռիսկերի» հիմունքներով՝ ներառյալ պատերազմական ռիսկերը և գործադուլները, սակայն համաձայն փոխադրվող գույքի բեռների կամավոր ապահովագրության թիվ ԲԱ 021967 վկայագրի՝ Ապահովագրական ռիսկերը, ապահովագրական պատահարները 12-րդ կետով բեռնման ու բեռնաթափման ընթացքում ռիսկերի համար բացառություն է արվել:

«Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամի, Աշխատակազմի, ՀՀ ԳԱԱ-ի Ինֆորմատիկայի և ավտոմատացման հիմնախնդիրների ինստիտուտի (գնորդ) և Ավստրիական Atos IT Solutions and Services GmbH կազմակերպության (մատակարար) միջև կնքված պայմանագրի շրջանակներում 01.09.2021 թվականին փոխանցվել է 134,534.96 հազ. դրամ:

«Հայաստանում գերհամակարգչային կենտրոնի հիմնում» Պետություն-մասնավոր հատված համագործակցություն ծրագրի շրջանակներում Թուլուզի տեխնոլոգիական ինստիտուտը հայտարարել է ՀՀ ԳԱԱ-ին CALMIP EOS սուպերհամակարգիչը (կլաստեր) Հայաստանին նվիրաբերելու մասին, որը 2018 թվականի դեկտեմբերից անջատել է համակարգը և չի օգտագործել: Նշված սուպերհամակարգչի արտադրողը հանդիսանում է Ավստրիական Atos IT Solutions and Services GmbH կազմակերպությունը:

Ըստ պայմանագրի (e)Specification (including Schedule of Requirements) Հստակեցում (ներառյալ Պահանջների ժամանակացույցը) բաժնի 2-րդ կետի Atos Group-ը պարտավորվում է՝

A. Կատարել Թուլուզի տեխնոլոգիական ինստիտուտում կլաստերի և դրա բաղադրիչների տեսողական զննում, երբ ապամոնտաժվում է:
B. Ապամոնտաժել կլաստերը, փաթեթավորել դրա բաղադրիչները և տեղափոխել Թուլուզի տեխնոլոգիական ինստիտուտից Atos-ի գործարանի տեղամաս, որը գտնվում է Ֆրանսիայում:
C. Բացել կլաստերի բաղադրիչները և նորից հավաքել դրանք Atos-ի տեղամասում, փոխարինելով հետևյալ բաղադրիչները նորերով. SSD-երը (արտաքին հիշողություն) և IB Fibers դրանց 40%-ի տվյալները ջնջել, դրանց վրա տեղադրել գնորդի կողմից տրամադրված ծրագրակազմը:
D. Վերապատրաստել, ուսուցանել գնորդների ինժեներներին Atos-ի տեղամասում
   a. Սարքավորումների սպասարկում և հովացման համակարգի կառավարում.
   b. Գործիքների պահպանում և գործընթացի սպասարկում.
E. Միացնել կլաստերը և կատարել ախտորոշում, որպեսզի հաշվետվություն տրամադրել կլաստերի կարգավիճակի մասին իր նոր բաղադրիչներով («թարմացված կլաստեր»):
F. Աջակցել գնորդին արտահանման (ֆրանսիայից) թույտվություններ ստանալու հարցում:
G. Ապամոնտաժել արդիականացված կլաստերը, փաթեթավորել դրա բաղադրիչները և սկզբնական պահեստամասերի հավաքածուն և տեղափոխել դրանք Atos-ի տեղամասից ՀՀ ԳԱԱ-ի Ինֆորմատիկայի և ավտոմատացման հիմնախնդիրների ինստիտուտի տեղամաս (EIF), բեռնաթափել դրանք EIF-ի տեղամասում:
H. Ապափաթեթավորել բաղադրիչները և նորից հավաքել արդիականացված կլաստերը EIF-ի տեղամասում:
I. Միացնել արդիականացված կլաստերը:
J. Պահպանել,սպասարկել կլաստերը մինչև 31.12.2023 թվականը:

Գնորդը պետք է պատրաստի իր տվյալների կենտրոնը ժամանակին, մինչև արդիականացված կլաստերի բաղադրիչների ժամանումը ՁԻՀ/ՀՀ ԳԱԱ-ի Ինֆորմատիկայի և ավտոմատացման հիմնախնդիրների ինստիտուտ (EIF-ի տեղամաս), որպեսզի մատակարարին թույլ տա կատարել H.I և j կետերում նշված առաջադրանքները: Պայմանագրի ընդանուր գումարը կազմում է 757.141 Եվրո:

Ըստ գնման ժամանակացույցի հավելվածի A,B,C,D,E,F,G կետերը իրականացնելու համար պայմանագրով սահմանված ժամկետը 22 շաբաթ է, պայմանագիրը ստորագրելուց հետո, գումարը՝ 281.686 Եվրո, (բացառությամբ SSD-երը (արտաքին հիշողություն) և IB Fibers փոխելուց):

SSD-երը (արտաքին հիշողություն) և IB Fibers փոխելու համար պայմանագիրը ստորագրելուց հետո 26 շաբաթ, գումարը 177.462 Եվրո:

Ըստ պայմանագրի GCC 16.1 կետի մատակարարին պետք է վճարվի 50% կանխավճար A,B,C,D,E,F,G կետերը ամբողջությամբ իրականացնելու համար, պայմանագիրի ստորագրման օրվանից տասնչորս օրվա ընթացքում՝ մատակարարի կողմից տրված համապատասխան վճարման հայտի ներկայացմամբ, որը կազմում է 229. 574 եվրո:

Պայմանագրի H.I կետի համար նախատեսվել է 80.171 եվրո՝ պայմանագիրը ստորագրելուց հետո 26 շաբաթվա ընթացքում:

Պայմանագրի j կետի համար նախատեսվել է 217.822 Եվրո: Ըստ պայմանագրի j կետի ժամկետ է սահմանվել մինչև 31.12.2023 թվականը:

Մատակարարի կողմից 10.08.2021 թվականին ներկայացվել է 229.574 Եվրոյի վճարման հայտ, որը գնորդի կողմից վճարվել է 01.09.2021 թվականին:

Ծրագիր՝ 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր»

Միջոցառում՝ 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ»

Հոդված՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 618,066.60 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 568,000.0 հազ.դրամ, փաստը՝ (դրամարկղային ծախս)՝ 551,735.32 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 607,043.03 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 89.27%-ով:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4111 հոդվածով ինն ամիսների ընթացքում կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 14

1213-11001 միջոցառման (հոդված 4111) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

Վճարման նպատակը	**Գումարը**
Աշխատավարձ	281,914.34
Եկամտային հարկ	92,865.57
Սոցիալական վճար	15,031.28
Դրոշմանիշային վճար	10,974.50
Արձակուրդային վճար	64,484.97
Պարգևավճար	50,594.64
Վերջնահաշվարկ	5,474.94
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	20,847.98
Դրամական օգնություն	1,659.89
Անդամավճար	6,067.83
Բռնագանձման գումար	1,819.38
ԸՆԴԱՄԵՆԸ	**551,735.32**

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված ինն ամիսների աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքների՝ 4111 հոդվածով կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 15

1213-11001 միջոցառման (հոդված 4111) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

Վճարման նպատակը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատավարձ	46,896.65	42,170.73	45,598.62	35,470.15	36,336.65	36,386.62	36,261.33	33,027.39	35,629.49	315,122.76
Դասային	73.31	121.38	135.04	132.32	113.20	122.42	105.37	84.31	113.45	1,000.81
Բարձր լեռնային	129.60	115.60	129.09	142.18	156.40	156.73	148.95	144.73		1,123.28
Հիվ. նպաստ	1,075.01	1,385.08	1,054.57	1,044.58	800.64	1,242.34	400.69	1,364.74	795.47	9,163.11
Դրամական օգնություն	491.42		212.31		576.08	357.16		233.47	89.61	1,960.05
Վերջնահաշվարկ	1,234.85	234.87	423.97	344.26	338.57	260.93		2,503.53	2,875.19	8,216.15
Արձակուրդային վճար	4,278.55	6,608.37	6,298.81	5,965.50	9,775.28	8,801.95	14,130.83	20,833.07	11,938.30	88,630.66
Պարգևատրում			20,360.43		829.27	28,153.33	770.86	291.02	31,507.16	81,912.07
Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողի անունից փոխանցվող սոցիալական վճար										72.00
ԸՆԴԱՄԵՆԸ հաշվարկված	**54,179.39**	**50,636.03**	**74,212.85**	**53,283.17**	**59,899.12**	**87,747.07**	**64,444.37**	**68,964.21**	**93,604.85**	**607,043.06**
Եկամտային հարկ	12,120.09	12,687.62	16,539.04	12,167.45	13,281.22	19,682.87	14,446.75	19,538.05	20,674.58	141,137.67
Սոցիալական վճար	899.95	1,036.73	1,390.24	979.34	1,190.71	1,530.07	1,316.90	1,912.45	1,827.76	12,084.16
Արհմիության վճար	448.35	487.93	651.08	472.50	515.33	781.45	563.92	726.54	768.25	5,415.35
Դրոշմանիշային վճար	927.50	967.50	1,226.50	1,012.00	1,027.00	1,393.50	1,136.00	1,420.50	1,445.00	10,555.50
ԸՆԴԱՄԵՆԸ վճարման ենթակա գումար	**39,783.50**	**35,456.24**	**54,405.99**	**38,651.88**	**43,884.86**	**64,359.19**	**46,980.79**	**45,366.67**	**68,889.25**	**437,778.38**

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Իրականացվել է ընտրված 6 աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ծրագիր՝ 1213 «Տեսչական վերահսկողություն»

Միջոցառում՝ 11007 «Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ»

Հոդված՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

2021 թվականի պետական բյուջեով 11007 «Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 605,902.50 հազ դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 580,000.0 հազ դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 572,259.87 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 647,742.77 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 94,44%:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4111 հոդվածով ինն ամիսների ընթացքում կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 14

1213-11007 միջոցառման (4111 հոդված) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

Նպատակ	Դրամարկղային ծախս
Աշխատավարձ	317,384.19
Արձակուրդային վճար	79,496.73
Հիվանդության նպաստ	10,398.26
Մայրության նպաստ	1,826.54
Պարգևատրում	17,753.05
Դրամական օգնություն	1,854.93
Վերջնահաշվարկ	4,647.03
Վճարված աշխատավարձ	433,360.73
Եկամտային հարկ	111,744.52
Սոցիալական վճար	13,502.2
Արհմիութենական անդամավճար	5,578.55
Դրոշմանիշային վճար	7,750.5
Բռնագանձում	323.37
Ընդամենը	572,259.87

Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից տրամադրված ինն ամիսների աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքների՝ 4111 հոդվածով կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 14

1213-11007 միջոցառման (4111 հոդված) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

Վճարման նպատակը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Ընդամենը
Հաշվարկված աշխատավարձ	46,722.53	54,532.75	55,152.92	55,681.65	56,434.85	55,454.54	54,731.59	52,056.50	53,808.49	484,575.82
Բարձր լեռնային	108.79	142.80	141.45	134.18	136.00	141.09	140.95	135.27	44.57	1,125.10
Դասային աստիճան	18.06	15.05	15.05	8.21	15.05	15.05	12.18	15.05	15.05	128.74
Հիվ. նպաստ	404.59	660.96	1,003.64	889.15	800.17	578.33	733.11	604.98	567.24	6,242.17
Վերջնահաշվարկ	431.74	121.33	0.00	1,282.51	47.66	215.02	369.27	101.05	800.20	3,368.78
Արձակուրդային վճար	13,151.90	7,316.94	8,216.81	9,099.19	14,147.58	13,279.06	21,752.26	24,366.77	14,981.79	126,312.30
Պարգևատրում և դրամական օգն.	577.40	460.99	0.00	703.73	0.00	16,291.29	2,278.73	3,018.41	2,362.17	25,692.72
Հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվողների դրոշմանիշային վճար	36.00	33.00	33.00	30.00	30.00	30.00	33.00	36.00	36.00	297.00
Ընդամենը հաշվ. աշխատավարձ	**61,451.01**	**63,283.82**	**64,562.87**	**67,828.62**	**71,611.31**	**86,004.38**	**80,051.09**	**80,334.03**	**72,615.51**	647,742.64
Եկամտային հարկ	13,511.30	13,860.47	14,196.60	14,760.80	15,747.90	18,914.40	17,605.50	17,618.90	15,778.90	141,994.77
Պարտադիր կուտակային վճար	1,217.60	1,310.67	1,334.50	1,492.70	1,567.66	1,963.70	1,967.50	1,719.60	1,552.20	14,126.13
Դրոշմանիշային վճար	1,264.00	1,311.00	1,308.00	1,356.50	1,378.50	1,473.50	1,456.00	1,450.00	1,398.00	12,395.50
Արհմիություն	605.50	617.60	632.61	655.44	690.07	846.06	785.14	783.42	704.58	6,320.42
Բոնազանձում	49.90	158.92	37.10	45.60	0.00	0.00	0.00	31.81	30.11	353.44
ԸՆԴԱՄԵՆԸ վճարման ենթակա գումար	44,802.71	46,025.16	47,054.06	49,517.58	52,227.18	62,806.72	58,236.95	58,730.30	53,151.72	472,552.38

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Ուսումնասիրվել է ընտրված 6 աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ծրագիր՝ 1223 «Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»

Միջոցառում՝ 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»

Հոդված՝ 4861 «Այլ ծախսեր»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման 4861 «Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 1,632,986.80 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 1,022,413.61 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,020,520.70 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,020,540.92 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 62.49%-ով:

Միջազգային դատարանում, միջազգային արբիտրաժում և այլ միջազգային ատյաններում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց կատարվել է 8 կազմակերպություններին վճարումներ, որոնք ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում՝

Աղյուսակ 14

1223-11001 միջոցառման (հոդված 4861) 2021 թվականի ինն ամիսների ընթացքում կատարված վճարումներ

հազ. դրամ

հ/հ	Կազմակերպության անվանումը	Վճարման ամսաթիվը	Նպատակը	Հազ. ԱՄՆ դոլար	գումարը
1	Steptoe & johnson LLP	02.02.21թ	ICSID վարույթում գտնվող Է. Խ.-ն և «Արին կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն ընդեմ ՀՀ-ին ARB/17/36 գործով ՀՀ-ի շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների ու այցելությունների մասով՝ ըստ տեխ. բնութագրի:	285.26	148,755.0
2	LALIVE	01.02.21թ	«Կորսան Կորվիամ կոնստրուկցիոն» ընկերության դեմ հարուցված արբիտրաժային գործի շրջանակում արբիտրաժային տրիբունալի կազմավորմանը, նախնական դատավարական գործընթացներին, ՀՀ հայցի	25.2	13,130.0

			նախապատրաստմանը, Մադրիդի թիվ 1 առևտրային Դատարանում դատավարական գործընթացներին ուղղված ծառայություններ:		
		15.04.21թ	Արբիտրաժային տրիբունալի կազմավորմանը, նախնական դատավարական գործընթացներին, ՀՀ պահանջի նախապատրաստում, Մադրիդի թիվ 1 առևտրային Դատարանում դատավարական գործընթացներին ուղղված ծառայություններ:	12.175 8.960	11,030.9
		23.07.21թ	Արբիտրաժի ռազմավարության մշակում իսպանական վարույթում զարգացումների լույսի ներքո, քննարկումներ, զանգեր և գրություններ վերոգրյալի վերաբերյալ, հայցադիմումի մշակմանն ուղղված աշխատանքներ, միջազգային առևտրային պալատին ծառայությունների դիմաց վճարման ապահովելուն ուղղված աշխատանքներ, արբիտրաժային վարույթի կասեցման միջնորդության մշակում և ներկայացում, կասեցման վերաբերյալ նամակագրություն ՀՀ-ի և տրիբունալի հետ ու դատավարական ժամանակացույցի թարմացում:	30.57	14,885.1
3	Linklaters S.L.P.	17.03.21թ	ՀՀՏԿԵՆ և «Կորսան Կորվիամ կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված N T1-T2-CW01 պայմանագրի շրջանակներում իսպանական դատարաններում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով Մադրիդում գործող Linklaters S.L.P.Ընկերությանը 2020թ հունիսի 9-ից մինչև հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունների համար:	127.8 հազ. եվրո	80,879.3
		22.06.21թ		44.4 հազ. եվրո	27,278.4
4	JAMS Վեճերի այլընտրանքային լուծման կենտրոն	18.01.21թ	JAMS կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ ՀՀ-ի» թիվ 1425032969 հաշտարարության գործով, մատուցված հաշտարարի ծառայությունների դիմաց	0.7	343.2
5	Baker & McKenzie LLP	30.04.21թ	Հայաստանի հարավային հատվածում երկաթուղու կոնցեսիայի վերաբերյալ հաշվետվության առնչությամբ հայցվորի ներկայացրած պնդումների ուսումնասիրություն և պատասխան հավելվածների նախագծում, երկրորդ հաշվետվության մշակումը	239.2	182,711.9
			Գործի համար էական նշանակություն ունեցող փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրում և ներկայացում, մյուս կողմի ներկայացրած միջնորդությունների առնչությամբ պատասխանների նախագծում և ներկայացնում, արբիտրաժային լսումներին մասնակցություն և ներկայացուցչություն	110.0	
		23.07.21թ	Ընկերության կողմից ներգրավված փորձագետի հարցաքննությունը նախապատրաստելուն և ներկայացնելուն ուղղված աշխատանքներ ու փորձագետի հարցաքննությունը	34.28	16,691.3
6	Fieldfisher LLP	27.07.21թ	դատական գործի նյութերի ուսումնասիրություն, ռազմավարական քայլերի մշակում, նախնական քայլերի/ գործողությունների ձեռնարկում Բոնհամս աճուրդային ընկերության դեմ, ընդդեմ ՀՀ հարուցված դատական վարույթի կասեցման նպատակով մյուս կողմի ու վերջինիս ներկայացուցիչների հետ համաձայնության ձեռքբերում և համապատասխան դիմումի նախապատրաստում և դատարան ներկայացում	25.5 GBP	17,260.18
7	Foly Hoag LLP	17.08.21թ	Արբիտրաժային տրիբունալի ձևավորման ռազմավարության մշակում, տրիբունալի ձևավորման մեթոդի վերաբերյալ առաջարկներ, հայցվորների ներկայացրած առաջարկների վերաբերյալ մեկնաբանություններ, ՀՀ կողմից նշանակվող արբիտրի թեկնածուների վերաբերյալ առաջարկների ներկայացում, թեկնածուների կենսագրության և մասնագիտական փորձի մանրամասն նկարագրություն, նամակագրություն առաջնահերթ ընտրված արբիտրների հետ՝ վերջիններիս հասանելիությունը ստուգելու նպատակով, արբիտրների ուսումնասիրություն և նախագահող արբիտրի հնարավոր թեկնածուների ցանկի կազմում, հայցվորի արբիտրաժային ծանուցման և կից հավելվածների ուսումնասիրություն, լրացուցիչ փաստական և իրավական հետազոտության իրականացում, արբիտրաժային գործով անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի ցանկի մշակում, հավաքագրված տեղեկատվության և փաստաթղթերի ուսումնասիրություն, տրիբունալի ձևավորման մեթոդի փոփոխության առնչությամբ նամակի ուսումնասիրություն, պատասխան նամակի նախագծում և ներկայացում:	70.0	34,648.6
8	Գաղտնի	11.03.21թ		98.0	51,797.9
		25.06.21թ		240.0	122,503.2
		14.09.21թ		240,0	118,639.2
Ընդամենը շահութահարկ			1-ին եռամսյակ		61,167.8
			2-րդ եռամսյակ		76,303.8

	3-րդ եռամսյակ		42,494.8
Ընդամենը			1,020,520.7

«STEPTOE & JOHNSON» ընկերություն. Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարույթում գտնվող Էդմոնդ Խուդյանը և «Արին Կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության թիվ ARB/17/36 ներդրումային արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով և համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1621-Ն որոշման Նյու Յորքում և Վաշինգտոնում գործող «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքվել է 280.0 հազ. ԱՄՆ դոլար (չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերը) ընդհանուր գումարով փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի դրույթները տարածվում են 2019 թվականի սեպտեմբերի 17-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Ծառայությունները մատուցվել են 2019 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև 2020 թվականի մարտ ամիսը ըստ տեխնիկական բնութագրերի, որի դիմաց 2021 թվականի փետրվարի 2-ին ընկերությանն է վճարվել 285,260.85 ԱՄՆ դոլարին համարժեք 148,754.9 հազ. դրամ:

«ԼԱԼԻՎ» ընկերություն. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի համաձայն ՄԱՄԱԻՀ (UNCITRAL) արբիտրաժային կանոնների ներքո 2019 թվականի հունվարի 24-ին «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության դեմ հարուցված արբիտրաժային վարույթում Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար 2019 թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ արդարադատության նախարարությունը և «ԼԱԼԻՎ» ընկերությունը կնքել են պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման ARB/19/1 պայմանագիր: Պայմանագրի շրջանակներում «ԼԱԼԻՎ» ընկերության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են ծառայություններ, որի դիմաց ընկերությանն է վճարվել 76.905 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 39,046.0 հազ. դրամ:

Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման թիվ 30 և 31 արձանագրությունները կազմելիս հիմք է ընդունվել «08» ապրիլի 2021 թվականին կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցիչի եզրակացությունը, այսինքն հանձման-ընդունման թիվ 30 և 31 արձանագրությունները կազմվել են մարտին հիմք ընդունելով ապրիլին կազմված եզրակացությանը: Երրորդ եռամսյակում անհամապատասխանության նման փաստ չի արձանագրվել:

«LINKLATERS S.L.P.» ընկերություն. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 1154-Ն որոշումը, որով սահմանվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (նախկինում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն) և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW01 պայմանագրի շրջանակներում իսպանական դատարաններում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ներգրավել Մադրիդում գործող «Linklaters S.L.P.» ընկերությանը, վերջինիս հետ՝ 2020 թվականի նոյեմբերի 27-ին, Աշխատակազմը 420.0 հազար եվրո ընդհանուր արժողությամբ փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 11-20 պայմանագիր է կնքել, որը ունի հետադարձ ուժ և գործում է 2020 թվականի հունիսի 9-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրի շրջանակներում «Linklaters S.L.P.» ընկերության կողմից 2020 թվականի հունիսի 9-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են ծառայություններ, որի դիմաց 2021 թվականի մարտի 17-ին և հունիսի 22-ին ընկերությանն է վճարվել 172.27 հազ. եվրոյին համարժեք 108,157.7 հազ. դրամ:

«ՋԱՄՍ» վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ Հայաստանի Հանրապետության» թիվ 1425032969 հաշտարարության գործով, կենտրոնի և հաշտարարի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսերը հոգալու նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1773-Ն որոշմամբ կենտրոնը և Աշխատակազմը 2020 թվականի նոյեմբերի 6-ին կնքել են պայմանագիր, որի շրջանակներում 2021 թվականի հունվարի 18-ին կենտրոնին է վճարվել 653 ԱՄՆ դոլարին համարժեք 343.2 հազ. դրամ:

«Baker & McKenzie LLP» ընկերություն. Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID Case No ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ արդարադատության նախարարությունը և «Baker & McKenzie LLP» ընկերությունը կնքել են պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման ARB/18/28-2 պայմանագիր, որի շրջանակներում 2021 թվականի ապրիլի 30-ին և հուլիսի 23-ին ընկերությանն է վճարվել 383.48 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 199,403.2 հազ. դրամ:

«Fieldfisher» LLP ընկերություն. Միացյալ Թագավորության Արդարադատության գերագույն դատարանում Սերգեյ Ստասևիչն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ հարուցած դատական գործի շրջանակում Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու և ներկայացնելու համար ՀՀ վարչապետի աշխատակազմն 2021 թվականի հունիսի 10-ին պայմանագիր է

կնքում «Fieldfisher» LLP ընկերության հետ, որի ծառայությունների մատուցման վճարը կազմում է 76.0 հազ. բրիտանական ֆունտ ստերլինգին համարժեք ՀՀ դրամ:

«Fieldfisher» LLP ընկերությունը 2021 թվականի հունվարին 19-ից մինչև ապրիլի 26-ն ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունների համար 2021 թվականի հուլիսի 21-ին ընկերությանն է վճարվել 25.5 հազ. բրիտանական ֆունտ ստերլինգին համարժեք 17,260.18 հազ. դրամ:

«Foley Hoag» LLP ընկերություն. Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարույթում 2021 թվականի ապրիլի 6-ին մուտքագրված Sanitek S.a.r.l., Sari Haddad և Elias Doumet ընդդեմ Հայաստանի Հանրապետության (ICSID Case թիվ ARB/21/17) արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով 2021 թվականի հունիսի 17-ին Աշխատակազմը և «Foley Hoag» LLP ընկերությունը կնքել են պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման ARB-05/21 պայմանագիրը, որի ընդհանուր գումարը կազմում է 1,150.0 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Սույն պայմանագրի դրույթները կիրառվում են 2021 թվականի ապրիլի 29-ից:

Պայմանագրի շրջանակներում «Foley Hoag» LLP ընկերության կողմից 2021 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են ծառայություններ, որի համար 2021 թվականի օգոստոսի 17-ին ընկերությանն է վճարվել 70.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 34,648.6 հազ. դրամ:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Առկա է անհամապատասխանություն 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ 28.07.2021 թվականին կնքված «Դրամաշնորհի հատկացման վերաբերյալ 04.05.2020 թվականի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» համաձայնագրի 1-ին կետի պահանջի հետ՝ Պայմանագրի 3.3.1 կետով կանխավճարի չափը կազմում է 114,328.0 հազ. դրամ, սակայն կանխավճարի սահմանված չափը հաշվետու ժամանակահատվածում չի պահպանվել:

6.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. Համաձայն ՀՀ վարչապետի 11.02.2021 թվականի թիվ 121-Ա և 26.05.2021 թվականի թիվ 569-Ա որոշումների՝ Աշխատակազմի հաստիքների քանակը սահմանվել է համապատասխանաբար 696 և 692: 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդից հունվար-սեպտեմբեր ամիսներին վճարումներն իրականացվել են համապատասխանաբար՝ 540, 539, 534, 535, 536, 527, 534, 531, 522 աշխատակցի հաշվով: Արդյունքում, ինն ամիսների ընթացքում, 156-ից 170 հաստիք չի համալրվել:

2. Աշխատակազմում 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ փաստը կազմել է 72.12%: Միաժամանակ՝ ճշտված պլանով ծախս է նախատեսվել 55 միջոցառման համար, որից 11 միջոցառում ընդհանրապես չի իրականացվել:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատակազմի կողմից չի ապահովվել 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ 28.07.2021 թվականին կնքված «Դրամաշնորհի հատկացման վերաբերյալ 04.05.2020 թվականի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» համաձայնագրի 1-ին կետի պահանջի կատարումը՝ կապված Պայմանագրի 3.3.1 կետով կազմակերպությանը տրամադրվող ամենամսյա կանխավճարի չափի պահպանման հետ:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկել Աշխատակազմում թափուր հաստիքների առկայության նպատակահարմարության հարցը:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (կցվում է), առարկություններ չեն ներկայացվել:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 257-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի» շրջանակներում հաշվեքննության արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) մեջ նշվածների վերաբերյալ հայտնում եմ՝

«1136. ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում

1. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին տրամադրվող ամենամսյա կանխավճարի 114.328.0 հազար դրամի չափը չպահպանելու վերաբերյալ դիտողությունը ընդունվել է ի գիտություն:

2. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի հետ 2021 թվականի 3-րդ եռամսյակում աշխատանքներ և վճարումներ չկատարելու վերաբերյալ, հայտնում ենք, որ վարկային միջոցներից «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին 2021 թվականին բյուջեով նախատեսված վերջին կանխավճարային փոխանցումը՝ 14,387.61 հազ. դրամը, կատարվել է 3-րդ եռամսյակում: 2021 թվականի հուլիսի 12-ի դրությամբ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին ամբողջությամբ փոխանցվել է դրամաշնորհային պայմանագրով 2021 թվականի տարեկան բյուջեով նախատեսված գումարը: Հուլիս ամսին կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է օգոստոսին, որում նշված գումարի չափով կատարվել է տրված կանխավճարի մարում: Օգոստոս և սեպտեմբեր ամիսների հաշվետվությունները «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են չորրորդ եռամսյակում:

«1136. ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «31004. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակներում սարքավորումների ձեռքբերում» միջոցառման շրջանակում ֆրանսիական գործընկեր Թուլուզի համակարգչային գիտության ինստիտուտը որոշում է կայացրել որպես ներդրում Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի /Ինստիտուտ/, նվիրաբերել Cluster Bullx B710 գերհամակարգչային համակարգը: Այդ նպատակով համալսարանը 2018

դեկտեմբերից անջատել է համակարգը և չի օգտագործել՝ համաձայն պայմանագրի A,B,C,D,E,F,G,H, I, J կետերի՝ այն հետագայում արդիականացնելու և հզորացնելու համար:

Վարչապետի աշխատակազմի ֆինանսական
և հաշվապահական հաշվառման
վարչության պետ Ս.Սահադյան